

СУЩЕСТВУЕТ ЛИ МЕХАНИЗМ СТАРЕНИЯ В НАШИХ ГЕНАХ?

**А. А. СИМОНЯН
И. Г. БАТИКЯН
А. С. МАРГАРЯН**

В обзорной статье приводятся новые научные данные о биологическом механизме старения и возможные пути продления молодости.

IS THERE A MECHANISM OF SENESCENCE IN OUR GENES?

**A. A. SIMONYAN
I. H. BATIKYAN
A. S. MARGARYAN**

New scientific data about the biological mechanism of the senescence and possible ways of prolongation of the youth are introduced in review article.

ԱՏՔ-ՖՈՍՖՈՐԻԴՐՈԼԱԶԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԾԱՆՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԻՈՆՆԵՐԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍԵՎԱՆԻ ԿՈՂԱԿԻ ՏԱՐԲԵՐ ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐԻ ՄԻՏՈՔՈՆԴՐԻՈՒՄՆԵՐՈՒՄ

Ա. Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կենսաբանական գիտությունների թեկնածու, ԳՊՀ դոցենտ

Ա. Ա. ՄԻՄՈՆՅԱՆ

Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ն. Գ. ՄԻՄՈՆՅԱՆ

«Սևան» ազգային պարկի գիտությամ գծով տնօրինիչ տեղակալ

Ռ. Բ. ԲԱԴԱԼՅԱՆ

Կենսաբանական գիտությունների թեկնածու

Ի. Յ. ԲԱՏԻԿՅԱՆ

Կենսաբանական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

Լ. Ա. ՄԻՄՈՆՅԱՆ

Բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ ԳԱԱ Դ. ԲՈՒՋԻԱՐՅԱՆԻ ամփան կենսաքիմիայի ինստիտուտ,

**Գավառի պետական համալսարանի կենսաբանության և
բնապահպանության ամբիոն, «Սևան» ազգային պարկ**

Սևանա լճի խոշորամասշտաբ ձևաբանական և ջրաբանական փոփոխությունները ջրի մակարդակի արհեստական իջեցման շրջանում և, դրա հետ կապված, զարգացող անթրոպոգեն ճնշումը լճի ջրհավաք ավազանի կողմից, հան-

գեցրին կայուն աճող, խորը բացասական լճաբանական հետևանքների և լճի տրոֆիկ կարգավիճակի բարձրացմանը: Լիճը օլիգոտրոփ վիճակից աստիճանաբար վերափոխվեց մեզոտրոփի [1]: Սևանի ավազանում ժողովրդական տնտեսության զարգացումը ավելի մեծացրեց դեպի լիճ չվերահսկվող էվտրոֆացնող, թունավոր ու աղտոտող նյութերի, այդ թվում նաև ծանր մետաղների հոսքը և աղետալի ազդեցություն ունեցավ լիճ օրգանական աշխարհի վրա, որը, սակայն, դեռևս բավարար չափով չի ուսումնասիրվել [2-4]: Բոլորովին չի ուսումնասիրվել ծանր մետաղների հինների ազդեցությունը Սևանի էնդեմիկ ձկների հյուսվածքներում և դրանց ենթաքաջային կառուցվածքային տարրերում ընթացող էներգետիկ փոխանակության վրա: Ելելով բերվածից՝ ներկայացվող աշխատանքում խնդիր է դրվել հետազոտել ծանր մետաղների հինների ազդեցությունը Սևանի կողակի (Varicorhinus capoeta sevangi, Filippi) երկու սեռերին պատկանող առանձնյակների տարրեր հյուսվածքներից (ուղեղից, յարդից, սրտամկանից, կմախքային մկաններից, փայծաղից և երիկամներից) անջատված միտոքոնդրիումներում աշնանային սեզոնի (հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների) ընթացքում:

Դայտնի է, որ աղենոզիներովուսֆատազները կատալիզում են ԱՏՖ-ի հիդրոլիզը, առաջացնելով ԱԴՖ և անօրգանական ֆոսֆատ, դրանով իսկ ապահովելով բջջի էներգետիկ ֆունկցիան: Կենսաբանական աշխատանքի բազմազան ձևերը համապատասխանում են ԱՏՖազների մոլեկուլային կազմակերպվածության տարրեր մակարդակներին: Սակայն ԱՏՖազներով կատալիզվող հիմնական ռեակցիան բոլոր դեպքերում միանման է՝ ԱՏՖ-ի ֆոսֆատային խմբի միայն մեկ Օ ~ P կապի ճեղքումը:

Հետազոտության նյութը և մեթոդները: Սևանի կողակի տարրեր հյուսվածքներից միտոքոնդրիումների անջատման, ԱՏՖազայի ակտիվության որոշման և այլ մեթոդներ բերված են մեր նախկին աշխատանքներում [5]: Ունակցիոն խառնուրդում (1 մլ) ծանր մետաղները (Cd^{2+} , Co^{2+} , Ni^{2+} և Mn^{2+}) ավելացվել են 1 մմոլ քանակով (Վերջնական խտությամբ): Ինկուբացիայի տևողությունը եղել է 30 րոպե, $26^{\circ} C$ -ում: Ինկուբացումից հետո ազատ անօրգանական ֆոսֆատի պարունակությունը որոշվել է Լոուրիի և Լոպեզի [6] եղանակով և հաշվարկվել 1 մգ սպիտակուցի վրա [7]: Ստացված տվյալների մշակումը կատարվել է Ստյուդենտի [8] t-չափանիշի եղանակով:

Հետազոտության արդյունքները և քննարկումը: Հետազոտությններից ստացված արդյունքներ (աղ. 1) ցույց են տալիս, որ Cd -ի հինների մերգործությամբ կողակի էգ ձկների ուղեղի միտոքոնդրիումներում ստուգիչի համեմատությամբ, ԱՏՖազայի կատալիտիկ ակտիվությունն աճում է 38 %-ով: Ni^{2+} -ի ավելացման դեպքում այդ աճը կազմել է 61 %: Սակայն փորձի նույն պայմաններում ստուգիչի համեմատությամբ Mn -ի հինները 19 %-ով ճնշում են ֆերմենտի ակտիվությունը:

**Այլուսակ 1. Ծանր մետաղների իոնների ազդեցությունը ԱՏՖազայի
ակտիվության վրա**

**Սևանի կողակի ուղեղի, յարդի և սրտամկանի միտոքոնդրիումներում
(ΔΡ մկասոմ / մգ սպիտակուցին / 30 րոպե) $M \pm S.M.E.$, $n=12$**

Թիան սեռը	Ստուգիչ	Cd ²⁺	Co ²⁺	Ni ²⁺	Mn ²⁺
Ուղեղ					
էգ	0.85 ± 0.02	1.17 ± 0.02 $p < 0.001$	1.04 ± 0.05 $p < 0.005$	1.37 ± 0.03 $p < 0.001$	0.69 ± 0.01 $p < 0.001$
արու	2.27 ± 0.04	2.08 ± 0.10 $p < 0.100$	1.61 ± 0.07 $p < 0.001$	1.99 ± 0.04 $p < 0.001$	1.70 ± 0.15 $p < 0.005$
Սարի					
էգ	0.81 ± 0.02	1.06 ± 0.08 $p < 0.100$	0.75 ± 0.01 $p < 0.001$	1.02 ± 0.06 $p < 0.100$	0.74 ± 0.03 $p < 0.001$
արու	1.07 ± 0.02	1.65 ± 0.02 $p < 0.001$	1.33 ± 0.12 $p < 0.050$	2.06 ± 0.10 $p < 0.001$	1.25 ± 0.14 $p < 0.200$
սրտամկան					
էգ	7.51 ± 0.07	12.11 ± 0.58 $p < 0.001$	16.23 ± 0.46 $p < 0.001$	8.33 ± 0.26 $p < 0.005$	17.83 ± 0.29 $p < 0.001$
արու	5.63 ± 0.12	9.50 ± 0.13 $p < 0.001$	11.18 ± 0.25 $p < 0.001$	5.90 ± 0.10 $p < 0.100$	15.41 ± 0.20 $p < 0.001$

ԱՏՖազի ակտիվության վերաբերյալ հետաքրքիր տվյալներ են ստացվել արու ձկների ուղեղի միտոքոնդրիումներում (աղ. 1): Այդ դեպքում ֆերմենտի ակտիվությունը գրեթե երեք անգամ գերազանցում է էգերի նույն ցուցանիշներին:

Սակայն, ի տարբերություն էգերի, ծանր մետաղների իոնները նշանակալի չափով ճնշում են ֆերմենտային ակտիվությունը արուների ուղեղի միտոքոնդրիումներում:

Յակառակ ուղեղի, փորձերում օգտագործված իոնները զգալիորեն (17-93 %-ով) ակտիվացնում են ԱՏՖ-ի ճեղքումը արու ձկների յարդից անջատված միտոքոնդրիումներում (աղ. 1):

ԱՏՖազի ակտիվացնան համանան պատկեր դիտվում է կողակի երկու սեռերին պատկանող ձկների մոտ նաև սրտամկանից անջատված միտոքոնդրիումներում (աղ. 1): Յակառակ այդ ցուցանիշների՝ Cd-ի և Ni-ի իոնները նշանակալիորեն ճնշում են ֆերմենտի ակտիվությունը ինչպես արու, այնպես էլ էգ ձկների կնախքային մկանների միտոքոնդրիումներում (աղ. 2): Սակայն Co²⁺-ի և Mn²⁺-ի ներգործությամբ դիտվում է ֆերմենտի ակտիվության որոշակի աճ:

Անփոփելով հետազոտություններից ստացված արդյունքները, երևում է, որ ընդհանուր ԱՏՖազային ակտիվությունը, ուսումնասիրված բոլոր հյուսվածքներից անջատված միտոքոնդրիումներում, էգերի համեմատությամբ բարձր է արու ձկների մոտ, բացի սրտամկանից:

Աղյուսակ 2. Ծանր մետաղների իոնների ազդեցությունը ԱՏՖազայի ակտիվության վրա

Սևանի կողակի կմախքային մկանների, փայծաղի և երիկամների միտոքոնդրիումներում

(ΔΡ մկատոմ / մգ սպիտակուցին / 30 րոպե) $M \pm S.M.E.$, n=12

Ձկան սեռը	Ստուգիչ	Cd ²⁺	Co ²⁺	Ni ²⁺	Mn ²⁺
կմախքային մկաններ					
էգ	4.02 ± 0.09	3.48 ± 0.24 p < 0.025	4.49 ± 0.15 p < 0.010	2.86 ± 0.08 p < 0.001	4.70 ± 0.22 p < 0.005
արու	5.01 ± 0.16	4.19 ± 0.25 p < 0.025	5.24 ± 0.24 p < 0.400	4.11 ± 0.22 p < 0.005	5.80 ± 0.18 p < 0.005
փայծաղ					
էգ	1.49 ± 0.11	2.55 ± 0.25 p < 0.001	2.74 ± 0.20 p < 0.001	2.22 ± 0.36 p < 0.100	1.29 ± 0.09 p < 0.200
արու	4.43 ± 0.62	4.24 ± 0.40 p < 0.500	4.58 ± 0.60 p < 0.200	3.70 ± 0.56 p < 0.400	5.45 ± 0.60 p < 0.005
երիկամներ					
էգ	1.88 ± 0.40	3.10 ± 0.06 p < 0.010	2.80 ± 0.23 p < 0.050	2.33 ± 0.14 p < 0.005	3.93 ± 0.09 p < 0.005
արու	1.85 ± 0.20	2.07 ± 0.11 p < 0.200	1.83 ± 0.03 p < 0.500	1.53 ± 0.14 p < 0.100	2.67 ± 0.10 p < 0.001

Յամադրելով բերված տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ տարբեր ծանր մետաղների իոնները Սևանի կողակի երկու սեռերին պատկանող ձկների հյուսվածքներից անջատված միտոքոնդրիումների ԱՏՖ-ֆուֆոհիդրոլազայի վրա տարաբնույթ ակտիվացնող կամ ճնշող ներգործություն ունեն: Դա ցույց է տալիս, որ ԱՏՖ-ֆուֆոհիդրոլազա ֆերմենտը Սևանի կողակի տարբեր օրգաններում օժտված է ոչ միայն հյուսվածքային, սեռային, այլև տեսակային յուրահատուկ առանձնահատկություններով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Օգանեսյան Պ. Օ., Պարպարօն Ա. Ս.** Некоторые итоги изучения гидробиологического режима озера Севан. // Природа, город, человек: Ереван. С. 135-137. 1987
2. **Օվսեպյան Ա. Կ.** Накопление тяжелых металлов в гидробионтах разного трофического уровня озера Малый Севан. // Автореф. канд. дисс. Москва. 1992
3. **Բաբаяն Գ. Գ.** Динамика некоторых тяжелых металлов и формы их миграции в озере Севан. // Автореф. канд. дисс. Ростов на Дону. 1989
4. **Օգանեսյան Պ. Օ., Բաբаяն Գ. Գ.** Тяжелые металлы в поверхностных водах бассейна озера Севан. // Биол. ж. Армении. 1987. Т. 40, N 12. С. 1004-1007

5. Симонян А. А., Симонян Н. Д., Маргарян А. С., Бадалян Р. Б., Батикян И. Г. Изменение в каталитической активности Mg^{2+} , Ca^{2+} - и HCO_3^- -зависимых АТРаз в изолированных митохондриях тканей Севанской храмули. // Биол. ж. Армении. 2009
 6. Lowry O. H., Lopez J. A. Biol. Chem., 1946. V. 162, P. 121
 7. Lowry O. H., Rosebrough N. J., Farr A. L., Randall R. J. Biol. Chem., 1951. V. 193, P. 265-275
 8. Бессмертный Б. С. Математическая статистика в клинической, профилактической и экспериментальной медицине. М., 1967

**СДВИГИ АТФ-ФОСФОГИДРОЛАЗНОЙ АКТИВНОСТИ
ПОД ВЛИЯНИЕМ ИОНОВ ТЯЖЕЛЫХ МЕТАЛЛОВ В МИТОХОНДРИЯХ,
ВЫДЕЛЕННЫХ ИЗ РАЗЛИЧНЫХ ТКАНЕЙ СЕВАНСКОЙ ХРАМУЛИ**

**A. С. МАРГАРЯН
А. А. СИМОНЯН
Н. Д. СИМОНЯН
Р. Б. БАДАЛЯН
И. Г. БАТИКЯН
Л. А. СИМОНЯН**

Ионы тяжелых металлов (Cd, Co, Ni, Mn) имеют неодинаковое воздействие в активности АТФ-фосфогидролазы в митохондриях, выделенных из тканей мозга, печени, сердечной и скелетных мышц, селезенки и почек севанской храмули мужского и женского пола (в осенний сезон - в октябре и ноябре). Результаты полученного нами экспериментального материала показывают, что АТФ-фосфогидролаза севанской храмули в митохондриях исследованных тканей наделена не только тканевыми, половыми, но и видовыми специфическими особенностями.

**SHIFTS OF ATP-PHOSPHOHYDROLAZA ACTIVITY UNDER INFLUENCE
OF HEAVY METAL IONS IN MITOCHONDRIA ISOLATED
FROM DIFFERENT TISSUES OF LAKE SEVAN KHRAMULYA**

**A. S. MARGARYAN
A. A. SIMONYAN
N. D. SIMONYAN
R. B. BADALYAN
I. H. BATIKYAN
L. A. SIMONYAN**

Heavy metals ions (Cd, Co, Ni, Mn) have different influence on ATP-phosphohydrolaza catalytic activity in isolated mitochondria from brain, liver, heart and skeletal muscles, spleen and kidney tissues of the Lake Sevan khramulya. The results of our experimental material show, that there are tissue, sexual and specific differences in the Lake Sevan khramulya mitochondrial ATP-phosphohydrolaza.